ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 24.11.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի Ավանի Աղի կոմբինատի լեռնահատկացման տարածքից այգեգործական նպատակով քաղաքացիներին տրամադրված հողակտորների նկատմամբ քաղաքացիների հողօգտագործման իրավունքները վերականգնելու վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը բարձրացված հարցը ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտեի քննարկմանը և կոմիտեից տեղեկացվել է, որ Ավանի Աղի կոմբինատի տնօրենի հրամանը (հողամասի հատկացման վերաբերյալ) և տրամադրված այգեգործի անդամատոմսերը չեն կարող հիմք հանդիսանալ այդ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքով պետական գրանցում կատարելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ հաշվի առնելով հարցի վիճահարույց լինելը և իրավասու մարմինների կողմից բարձրացված հարցի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները, հարցի կարգավորման նպատակով Երևանի քաղաքապետարանում քննարկումներ են ընթանում համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ և նշված քննարկումների ավարտից հետո հնարավոր կլինի անդրադառնալ հարցի կարգավորմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ